ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»

հասարակական կազմակերպությունից

հասցե՝ ք. Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Կոստանյան,

Ինչպես Ձեզ հայտնի է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում կատարվող անօրինությունների և բռնությունների փաստերով հարուցվել էր քրեական գործ և հաստատության մի շարք աշխատակիցների մեղադրանք էր առաջադրվել:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ՀԿ) ակտիվ մասնակցություն է ունեցել նշված հանցավոր արարքների բացահայտման և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործընթացներում:

Ցանկանում ենք Ձեզ հայտնել, որ մենք ընդհանուր առմամբ գոհ ենք հաստատության աշխատակիցների հանցավոր արարքները բացահայտելու հարցում իրավապահ մարմինների և դատախազության աշխատակիցների ձեռնարկած գործողություններից: Միաժամանակ տեղեկացնում են, որ այս հաստատության հետ կապված բացահայտվել են նաև այլ հանցավոր արարքներ, որոնք կատարվել են մի շարք անձանց, այդ թվում՝ պաշտոնյաների կողմից:

Այսպես՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից 27.05.2015 թվականին, ի պատասխան ՀԿ-ի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Հայրապետյանի հարցմանը, ուղարկվել է ՀՀ Վարչապետի 02.05.2014թ. թիվ 378-Ա որոշումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ֆիլարեթ Բերիկյանին կարգապահական տույժի ենթարկելու մասին:

ՀՀ Վարչապետը կարգապահական պատասխանատվության է ենթարկել փոխնախարարին՝ երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտը վատ համակարգելու և իր պաշտոնական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար: Փոխնախարարը պատասխանատվության է ենթարկվել Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ:

Միաժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի 27.05.2015թ.-ի պատասխանում նշված է, որ երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտը համակարգում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Բերիկյանը:

Նույն գրությունից տեղեկանում ենք, որ Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության աշխատանքների համակարգման հետ կապված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 02.05.2014թ. 38-Ա/4 հրամանով նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

Այսպիսով, առնվազն երկու պաշտոնատար անձինք իրենց պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ են կատարել, որի արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին և երեխաների իրավունքներին և ազատություններին:

ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ պետության օրինական շահերին, քրեորեն պատժելի արարք է:

Այսպիսով, տվյալ դեպքում ակնհայտ է առնվազն այս երկու պաշտոնատար անձանց կողմից կատարվածը քրեորեն պատժելի արարքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք քրեական գործ հարուցել նշված փաստերի հետ կապված և պատասխանատվության ենթարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Բերիկյանին և նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետին և ստուգել նախարարության՝ ոլորտին առնչվող այլ աշխատակիցների գործողություններում հանցագործության հատկանիշների առկայության փաստը:

Կից ուղարկվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի 27.05.2015թ. պատասխանի և ՀՀ Վարչապետի 02.05.2014թ. թիվ 378-Ա որոշման պատճենները:

ՀԿ-ի ներկայացուցիչներ՝ Հերիքնազ Տիգրանյան

Տիգրան Հայրապետյան

17.05.2016թ.

Ստացող 19.05.16թ.
Ն. Հարությունյան